600.0198.05.06.20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

5 հունիսի 2020 թվականի №198Ա
ք. Երևան

«ԳՐԻՆ ԷՆԵՐՋԻ ԿՈՆՑԵՌՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԼԷ№0592 ԼԻՑԵՆԶԻԱՆ ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 29-Ի №160Ա ԵՎ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 27-Ի №177Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը և հաշվի առնելով «ԳՐԻՆ ԷՆԵՐՋԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ԿՈՆՑԵՌՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2020 թվականի հունիսի 2-ի գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի.
   1) 2016 թվականի մայիսի 19-ի «ԳՐԻՆ ԷՆԵՐՋԻ ԿՈՆՑԵՌՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Գոռնար» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №121Ա որոշմամբ «ԳՐԻՆ ԷՆԵՐՋԻ ԿՈՆՑԵՌՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված «Գոռնար» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0592 լիցենզիան վերաձևակերպել «ԳՐԻՆ ԷՆԵՐՋԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ԿՈՆՑԵՌՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության անվամբ.

2) 2019 թվականի մայիսի 29-ի «Փոքր հիդրոէլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագները սահմանելու մասին» №160Ա որոշման 1-ին կետի 142-րդ ենթակետում «ԳՐԻՆ ԷՆԵՐՋԻ ԿՈՆՑԵՌՆ» բառերը փոխարինել «ԳՐԻՆ ԷՆԵՐՋԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ԿՈՆՑԵՌՆ» բառերով.

3) 2020 թվականի մայիսի 27-ի «Փոքր հիդրոէլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագները սահմանելու մասին» №177Ա որոշման 1-ին կետի 140-րդ ենթակետում «ԳՐԻՆ ԷՆԵՐՋԻ ԿՈՆՑԵՌՆ» բառերը փոխարինել «ԳՐԻՆ ԷՆԵՐՋԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ԿՈՆՑԵՌՆ» բառերով:

2. «ԳՐԻՆ ԷՆԵՐՋԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ԿՈՆՑԵՌՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հունիսի 6-ից, բացառությամբ 1-ին կետի 3-րդ ենթակետի, որն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հուլիսի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
5 հունիսի 2020թ.